

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՍՈՐԻ  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ  
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մասին օրենքով և 2014 թվականի աշխատանքային ծրագրով:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է ինչպես օրենքով ամրագրված պարտադիր լիազորված, այնպես էլ պետության կողմից պատվիրակված լիազորություններ: Նշված լիազորությունների մի մասը համայնքի ղեկավարը իրականացնում է անձամբ, իսկ մյուս մասը համայնքի ավագանու հետ միասին: Մասնավորապես համայնքի ղեկավարը որպես գործադիր մարմնի ղեկավար մշակել և նախապատրաստել է անհատական, իրավական ակտեր բյուջեի վերաբերյալ, որոնք օրենքով սահմանված կարգով ներկայացվել են համայնքի ավագանու հաստատմանը:

Ընդհանուր առմամբ հաշվետվությամբ ընդգրկված ժամանակաշրջանում հրավիրվել են թվով 11 նիստեր, որտեղ քննարկվել են համայնքի Ավագանու նիստերի ժամանակացույցի հաստատման մասին, Մեծամորի գյուղապետարանի աշխատակազմի և նրա ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների հաստիքացուցակը հաստատելու մասին, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին, անապահով ընտանիքներին սոց. օգնություն տրամադրելու



մասին, բյուջեում փոփոխություն կատարելու մասին, 2015թվականի բյուջեն հաստատելու մասին և մի շարք այլ հարցեր, որոնց կապակցությամբ ընդունվել են համապատասխան որոշումներ, որոնք ներկայացվել են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան և ՀՀ Արդարադատության նախարարություն:

Հաշվետու ժամանակաշրջանում որպես պարտադիր լիազորություն կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն, ընթացք տալով նրանց կողմից բարձրացված դիմում - բողոքներին, գրանցվել են թվով 41 դիմումներ. հերթական արձակուրդների վերաբերյալ, դրամական օգնություն տալու վերաբերյալ, որոնց ժամանակին տրվել են համապատասխան լուծումներ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից ձեռնարկվել է բյուջետային գործընթաց, կատարվել է բյուջեի փոփոխություններ, և ներկայացվել է համայնքի ավագանու հաստատմանը:

	Եկամուտներ	2014թ տարեկան	փաստացի	կատարման %
1	հողի հարկ	2712.7	2713.8	100%
2	գույքահարկ	2150,0	3647.5	169.6%
3	վարձ. հողի հարկ	1400,0	1402.5	100.1%
4	դոտացիա	18901.3	18929.3	100.1%
5	տեղական տուրք տեղական վճար	40.0 20,0	24.9 100.0	62.2% 500.0%
6	այլ ոչ հարկային եկամուտներ	480.0	480.0	100.0%
	հողի օտարումից մուտքեր	--	--	--



տարեսկզբի ազատ մնացորդ	5511.3	5511.3	
Ընդամենը	31215.3	32809.3	105.1%

	Ծախսեր	2014թ. Պլան	Փաստացի	կատարման %
1	Տեղական ինքնակառավարում	15917.1	15873.6	99.7
2	Ընդհ. բնույթի համայնք. ծառ.	3100.0	3099.0	99.9
3	Կրթություն և գիտություն	3746.9	3738.9	99.7
4	Սոցիալական ապահովություն	1500.0	1500.0	100,0
5	Աղբահանում	1440.0	1440.0	100,0
6	Պահուստային ֆոնդ	--	--	-
7	Նախորդ տարիների պարտք	--	--	--
8	Ֆոնդային բյուջե	5511.3	4796.6	87.0
	Ընդամենը	31215.3	30448.1	97.5

2014թվականի ընթացքում բյուջեն կատարվել է 105.1 %-ով, իսկ սեփական եկամուտների մասով 123.0%-ով:

Համայնքի ղեկավարը հաշվետու ժամանակաշրջանում ընդունել է թվով 31 որոշումներ՝ ինքնական շինությունների փաստաթղթերի հաստատման մասին, հասցեավորու տալու մասին, ատեստավորում անցկացնելու մասին և 64 կարգադրություններ հերթական արձակուրդից օգտվելու մասին, համայնքային ծառայողների գործուղման մասին, հանձնաժողովներ ստեղծելու մասին:

Համայնքի ղեկավարի կողմից իրականացվել են կամավոր լիազորություններ, որոնց միջոցով համայնքի ղեկավարը աջակցություն



է ցուցաբերել քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը: Ընդգրկվելով համապատասխան գորակոչային հանձնաժողովի կազմում, ինչպես նաև այլ ձևերով աջակցություն է ցուցաբերվել էջմիածնի զին. կոմիսարիատին և մարզային գորակոչային հանձնաժողովին գորակոչի գորահավաքի և ուսումնավարժական հավաքների կազմակերպման հարցում: Թվով 13 հոգու ուղարկվել է համապատասխան զինվորական մաս: Տեղեկացվել է բացակայող զինակոչիկների մասին:

Որպես պատվիրակված լիազորություններ հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից համայնքում կազմակերպվել են 33 տոների և հիշատակի օրերի հետ կապված մի շարք միջոցառումներ:

Երիտասարդության հարցերը միշտ էլ ընդգրկված են եղել համայնքի ղեկավարի կողմից իրականացվող քաղաքական տիրույթում, որոնց տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը արտահայտվում է համայնքի սոցիալ տնտեսական պայմանների բարձրացմանը:

Համայնքում գործում է բուժ. կետը, որտեղ սիստեմատիկ կերպով կակարվում են բժշկական միջոցառումներ: Մշակույթի և սպորտի բնագավառում գյուղում գործում է «Աստղիկներ» պարային համույթը: Տարբեր սպորտային խմբակներում ընդգրկված գյուղի պատանիներն ու երիտասարդները, մասնավորապես հունա - հռոմեական ոճի ըմբշամարտի գծով Հայաստանի և Եվրոպայի չեմպիոններ են:

Սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների շարքում առանձնա-

հատուկ կարևորություն են ունեցել սոց. օգնության տրամադրման հարցերը, որոնցում տրամադրվել է 1500,0 հազար դրամ դրամական օգնություն:

Գյուղատնտեսության բնագավառում գյուղապետարանը աջակցում է հացահատիկի բերքահավաքի բնականոն աշխատանքներին, որն ուղղակիորեն անդրադառնում է համայնքի սոցիալ - տնտեսական վիճակի և դրա զարգացման վրա: Պետության ֆինանսավորմամբ կազմակերպվել է համայնքի տարածքում անասնաբուժական միջոցառումներ կենդանիների հիվանդությունների կանխարգելման և ագրարային այլ կանոնների աշխատանքներ, կատարվել է աղբահանություն:

Գյուղապետը և ավագանին առանձնակի ուշադրություն են դարձնում գյուղի սանիտարական մաքրության պահպանման, ջրաղբյուրների նախատեսված գոտիների մաքրության պահպանման ուղղությամբ:

Գյուղապետարանի միջոցով իրականացվում է ազգաբնակչության կենցաղային աղբի հավաքումը և հեռացումը: Պայմանագրային սկզբունքով շաբաթը մեկ անգամ աղբատար մեքենան շրջում է համայնքի փողոցներով և հավաքում ու տեղափոխում է աղբը Շահունյան համայնքի աղբավայրում:

Համայնքի գեր խնդիրներ են հանդիսանում գազաֆիկացումը, մանկապարտեզի վերանորոգման հարցը:

Համայնքի ղեկավար՝

Է. Միրզոյան



